դլուխը հորիզոնին բաղխում։ Մի քանի շինականներ են անցնում։ Փոփոխ, պատռուած ըդդեստներ, գրեթէ ցնցոտիներ, չարուխներ։ Այրուած ու մաշուած դէմքեր, որոնք ոչինչ չեն արտայայտում։ Ժայռերի նման լուռ են եւ մունջ։ Գնում են ծանրաքայլ, իրենց ձեռքին մի վայտ բռնած, առանց հետաքրքրութեան՝ ոչ մի բանից չզարմանալով։

Ի՞նչ թաղցնեմ, ես նրանց չեմ հասկանում։

Եւ որովհետեւ չեմ հասկանում՝ մելամաղձութիւնս դեռ աւելի սաստկանում է։ Պիտի ուղէի կառքից, իշխանութեան խարխուլ եւ ծիծաղելի այս բարձրութիւնից իջնել, մօտենալ այդ շինականներից մէկին եւ միւսին, եւ կոպիտ նրանց ձեռքերը սեղմելով, ասել, որ սիրում եմ նրանց։ Սիրո՞ւմ եմ նրանց։ Աւելի շուտ պէտք եմ զգում սիրելու, անհրաժեշտ է որ սիրեմ, ոչ թէ իրենց խորամանկութեան համար, իրենց կծու եւ սահմանափակ ժլատութեան համար, այլ նրա համար, որ նրանք հիմնական մասն են կազմում դարաւոր մի ամբողջի ողբերգական մի պատմութեան եւ իմ սրտիս մէջ բաղմող հողեկան մի աշխարհի։

Եւ նաեւ, որովհետեւ նրանցից ոչխարի եւ կովի հոտ է գալիս։

* * *

Արե՛ւ, արե՛ւ։

Նստել եմ նախ կամուրջի վրայ, եւ դարունը իր արեւի ճառագայթները բերել խառնել է ներսս վառուող մեղմ տենդին։

Կարծես բոցերից եփուած հին մի գինի եմ խմել։

Հեռուում, դէպի հիւսիս, լիճի ափը բոլորում է ամայի եւ մենակեաց հողերի շուրջը։ Այնտեղից իջնում են Սիւնեաց աշխարհը՝ լեռների եւ անտառների վիթխարի երկիրը։

Մօտակայ ափին մի գիւղ, որի անունը չեմ յիշում։ Անտաշ քարերից շինուած մի քանի տներ եւ գրեթէ ոչ մի ծառ։ Ափի մօտ երեք կովեր են կանգնել, ահա կէս ժամ է գրեթէ անշարժ։ Նրանք եւս ինձ նման արեւի պաշար են ամբարում եւ, ո՞վ գիտէ, նրանք եւս հիւանդ են որեւէ տենդով։

Տխուր է։

Դաշտանկարը ներս է մտել սրտիս մէջ եւ տրամօրէն խօսակցում է։ Խօսում է վշտալի լրտերի նման կիսաձայն, կուրծքի խորքում ընտրած մութ դեղին խօսքերով։ Իր ձայնը էութեանս մէջ արձագանգում է ինչպէս խիտ մի անտառում։

— Մա՛յր իմ, եկել եմ։

— Գնացիր, աշխարհը պտտեցիր, եկար...

— Գնացի, աշխարհը պտտեցի, եկայ... Եկայ, աւելի որբ քան երբեք։ Ուրախ չէ՛ աշխարհը։ Գիտես, անցորդ տարագիրը ամէն տեղ էլ դժբախտ է։ Այնտեղ, քաղաքները դըղրդալից են եւ ամէհի, ճամբաները ոլոր են ու դժուարին եւ պատառ հացը արիւնով է խառնուած։

Գնացի աշխարհը պտտեցի, եկայ... Ծերացե՛լ ես, մայր։ Պառաւ աչքերիդ մէջ հովերը երկաթօրէն հառաչել են, ու ձմեռը դողահար պար է եկել։ Մաղերդ ճերմկել են եւ դէմքիդ վրայ անձրեւները ակօսներ են բաց արել։ Ծերացե՛լ ես, մայր։

Կովերը, միշտ նոյն դիրքի մէջ, անշարժ կեցել են։

Գարունն էլ եկել իր խօսքն է ասում։

Ասում է. սպասիր, հազար դանակներ եմ բերել, կարմիր կօշիկներ եմ հագել, դանակները պիտի սրեմ, կարմիր կօշիկներով պիտի պարեմ։

Պիտի պարեմ, պիտի պարեմ, պիտի պարեմ...

Ու աչքերիս առջեւ կոլոր լոյսեր են անցնում, ճերմակ աստղերի նման, պտոյտ են գալիս, հեռանում են, յետոյ նորից մօտենում, մեծանում, մեծանում...

Լիճն էլ խաղաղ է եւ խոր։

Խաղաղ եւ կապոյտ։

Էութեանս մի ինչ որ հեռաւոր կենտրոնում լրաւոր գործիքներ տրամօրէն նուագում են, բայց այդ տրամութիւնը անուշ է եւ հաճելի։ Մերթ ընդ մերթ, սրինգի մի ձայն լեռան վրայից մելամաղձօրէն կանչում է եւ կանանչներով ճիւղաւորուած մի աշխարհ կամաց կամաց տատանուում է։

— Մա՛յր իմ, եկել եմ։

— Գնացիր, աշխարհը պտտեցիր, եկար...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան